ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/10113-2022

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՎԱՀԱՆ ՆԱՐԻԲԵԿՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Նարիբեկյան,

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-194-09.03.2022-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի մարտի 31-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 334 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Պ. Քացախյան

Հեռ. 010515686

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-194-09.03.2022-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) 1-ին հոդվածով առաջարկվում է «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքը (այսուհետ՝ օրենք) լրացնել նոր՝ 127.1-ին հոդվածով, որի՝

1. 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո, 20 օրվա ընթացքում, արտաքին գործերի նախարարը, իսկ վարչապետը՝ յուրաքանչյուր տարի երկու անգամ՝ մինչև դեկտեմբերի 1-ը և հունիսի 1-ը Ազգային ժողով զեկույց են ներկայացնում Հայաստանի Հանրապետության անվտանգության, պաշտպանության և արտաքին քաղաքականության համար ռազմավարական նշանակություն ունեցող հարցերում ընթացող գործընթացների, դրանց շրջանակներում վարվող բանակցությունների և ձեռք բերված կամ հնարավոր պայմանավորվածությունների առանցքը կազմող հիմնարար դրույթների վերաբերյալ:

Որպես հիմնավորում նշվել է, որ առաջարկվող կարգավորումը հնարավորություն կտա պատգամավորներին տեղեկացված լինել Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության, պաշտպանության և անվտանգության հարցերի վերաբերյալ ձեռք բերված պայմանավորվածությունների, ստորագրված կամ քննարկման փուլում գտնվող փաստաթղթերի և ոլորտային այլ կարևորագույն հարցերի վերաբերյալ, ինչպես նաև կստեղծի հնարավորություն խորհրդարանական բոլոր ուժերին, այդ թվում՝ փոքրամասնություն կազմող խմբակցություններին հավասարապես իրացնել Սահմանադրությամբ և օրենքով իրենց վերապահված լիազորությունները, մասնավորապես, մշտական հանձնաժողովների աշխատանքների միջոցով իրականացնել խորհրդարանական վերահսկողությունն ավելի լայն ծավալով:

Այս կապակցությամբ հարկ ենք համարում անդրադառնալ հետևյալ իրավակարգավորումներին՝

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 146-րդ հոդվածի 2-րդ մասը, համաձայն որի Կառավարությունն իր ծրագրի հիման վրա մշակում և իրականացնում է պետության ներքին և արտաքին քաղաքականությունը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 156-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր տարվա համար Կառավարությունը զեկույց է ներկայացնում Ազգային ժողով իր ծրագրի կատարման ընթացքի և արդյունքների մասին:

Օրենքի 122-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ մշտական հանձնաժողովները Կանոնակարգի 112-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված իրենց իրավասությունների շրջանակում՝ կարող են տեղեկություններ պահանջել Կառավարության ծրագրի կատարման ընթացքի վերաբերյալ:

Օրենքի 126-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրությամբ նախատեսված

պետական մարմինների զեկույցները, հաղորդումները, հաշվետվություններն Ազգային ժողովի քննարկմանը ներկայացվում և շրջանառության մեջ են դրվում Կանոնակարգով և Աշխատակարգով սահմանված կարգով:

Վերոնշյալ դրույթներից բխում է, որ Կառավարության ծրագիրը ներառում է ինչպես պետության ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականությանն առնչվող Կառավարության գործունեության հիմնական ուղղությունները, որի ընթացքի և արդյունքների մասին յուրաքանչյուր տարի Կառավարության կողմից ներկայացվում է զեկույց: Բացի դրանից, օրենքի գործող կարգավորումները թույլ են տալիս մշտական հանձնաժողովներին պահանջել տեղեկություններ Կառավարության ծրագրի կատարման ընթացքի վերաբերյալ, հետևաբար առկա են բոլոր մեխանիզմներն անհրաժեշտ տեղեկություններն ստանալու համար:

Անդրադառնալով Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության կողմից զեկույցի ներկայացմանը՝ հարկ ենք համարում նկատի ունենալ, որ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը Կառավարության կառուցվածքի մաս է կազմում, ուստի, պահանջվող անհրաժեշտ տեղեկատվությունը կարող է տրամադրվել օրենքի 127-րդ հոդվածով նախատեսված կարգով Կառավարության զեկույցի շրջանակներում, և որևէ այլ կարգավորում սահմանել, որով Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը կառանձնացվի պետական կառավարման այլ մարմիններից, նպատակահարմար չէ:

Ինչ վերաբերում է զեկույցով ներկայացվող տեղեկություններին, ապա հարկ է նկատի ունենալ, որ բանակցությունը շարունակական բնույթ կրող գործընթաց է, որով ակնկալվող արդյունքը կապված է բանակցող կողմերի դիրքորոշումից, վերջնական արդյունքը բանակցությունների փուլում կանխատեսելի չի կարող լինել՝ նկատի ունենալով, որ կարծիքներն ու առաջարկները կարող են անընդհատ փոփոխությունների ենթարկվել, հետևաբար, հնարավոր պայմանավորվածությունների վերաբերյալ զեկույց ներկայացնելն անտրամաբանական է:

2. 4-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված զեկույցն Ազգային ժողովի պատգամավորների մեկ քառորդի պահանջով մեկամսյա ժամկետում՝ Խորհրդի սահմանած օրը, քննարկվում է Ազգային ժողովի հերթական նիստերում՝ Կանոնակարգի 126-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով:

Այս կապակցությամբ հարկ է նկատի ունենալ օրենքի 126-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, համաձայն որոնց Սահմանադրությամբ նախատեսված պետական մարմինների զեկույցները, հաղորդումները, հաշվետվություններն Ազգային ժողովի քննարկմանը ներկայացվում և շրջանառության մեջ են դրվում Կանոնակարգով և Աշխատակարգով սահմանված կարգով:

Հարցն Ազգային ժողովի նախագահին ներկայացվելուց հետո՝

1) մեկամսյա ժամկետում քննարկվում է իրավասու մշտական հանձնաժողովում՝ առանց որևէ փաստաթղթի ընդունման.

2) երկամսյա ժամկետում Խորհրդի սահմանած օրը քննարկվում է Ազգային ժողովի հերթական նիստերում:

Նշված դրույթից բխում է, որ նշված կարգով Խորհրդի սահմանած օրն Ազգային ժողովի հերթական նիստում զեկույցը պետք է քննարկվի երկամսյա ժամկետում, իսկ

մեկամսյա ժամկետը վերաբերում է իրավասու մշտական հանձնաժողովում քննարկելուն, մինչդեռ, նախագծով նախատեսվել է զեկույցի քննարկումը մեկամսյա ժամկետում՝ Ազգային ժողովի հերթական նիստում՝ Խորհրդի սահմանած օրն իրականացնելու վերաբերյալ կարգավորում, միաժամանակ, հղում է կատարվել օրենքի 126-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգին, ինչի արդյունքում առաջանում է հակասություն:

3. 5-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածով նախատեսված խորհրդարանական վերահսկողության առարկային վերաբերող հարցերի պարզաբանման առնչությամբ իրավասու մշտական հանձնաժողովի կամ Ազգային ժողովի որոշմամբ կարող են հրավիրվել իրավասու պաշտոնատար անձինք, որոնք պարտավոր են ներկայանալ հանձնաժողովի կամ Ազգային ժողովի նիստին և պատասխանել հարցերին:

Որպես առաջարկվող կարգավորման ակնկալվող արդյունք՝ նշվել է դրական ազդեցությունն Ազգային ժողովի պատգամավորների և, մասնավորապես, ընդդիմության կողմից խորհրդարանական վերահսկողության գործիքակազմերի ամբողջական իրացման տեսանկյունից:

Այս կապակցությամբ հարկ է նկատի ունենալ, որ գործադիր իշխանության նկատմամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված Ազգային ժողովի վերահսկողության գործառույթի կատարումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով արդեն իսկ նախատեսված են մի շարք գործիքներ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից Ազգային ժողով իր ծրագրի կատարման ընթացքի և արդյունքների մասին զեկույցի ներկայացումը, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից պետական բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողությունը, որը դրսևորվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից պետական բյուջեի, այդ թվում՝ նպատակային վարկային և դրամաշնորհային ծրագրերի կատարման ընթացքի վերաբերյալ Ազգային ժողով տեղեկանքի ներկայացմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության անդամներին պատգամավորների կողմից բանավոր և գրավոր հարցեր ուղղելու, պատգամավորական խմբակցությունների հարցապնդումների, հասարակական հետաքրքրություն ներկայացնող հրատապ թեմայով քննարկումներ անցկացնելը, քննիչ հանձնաժողով ստեղծելը և այլն, որոնք անհրաժեշտ ու բավարար են նախագծի հիմնավորմամբ ներկայացված նպատակներին հասնելու համար:

Բացի դրանից, օրենքի 122-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ խորհրդարանական վերահսկողության առարկային վերաբերող հարցերի պարզաբանման առնչությամբ մշտական հանձնաժողովը կարող է իր որոշմամբ հանձնաժողով հրավիրել իրավասու պաշտոնատար անձանց, որոնք պարտավոր են ներկայանալ հանձնաժողովի նիստին և պատասխանել հարցերին:

Վերոնշյալ դրույթից բխում է, որ նախագծով առաջարկվող կարգավորումն ըստ էության նույնաբովանդակ կարգավորում է նախատեսում, ինչ օրենքի 122-րդ հոդվածի 4-րդ մասը, հետևաբար, կրկին նախատեսման անհրաժեշտությունը բացակայում է:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առաջարկում ենք զերծ մնալ նախագծի ընդունումից և օրենքը թողնել անփոփոխ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 334 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ)
ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Երանուհի Թումանյանցին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-194-09.03.2022-ՊԻ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

31.03.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ՆԱԽԱԳԻԾ

Պ-194-09.03.2022-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ազգային ժողովի կանոնակարգ» 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-9-Ն սահմանադրական օրենքը (այսուհետ՝ Օրենք) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 127.1 հոդվածով.

«Հոդված 127.1. Պետության արտաքին քաղաքականության եւ անվտանգության հարցերի վերաբերյալ զեկույցները

1. Յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո՝ 20 օրվա ընթացքում՝ արտաքին գործերի նախարարը, իսկ վարչապետը՝ յուրաքանչյուր տարի երկու անգամ՝ մինչեւ դեկտեմբեր 1-ը եւ հունիսի 1-ը Ազգային ժողով զեկույց են ներկայացնում Հայաստանի Հանրապետության անվտանգության, պաշտպանության եւ արտաքին քաղաքականության համար ռազմավարական նշանակություն ունեցող հարցերում ընթացող գործընթացների, դրանց շրջանակներում վարվող բանակցությունների եւ ձեռք բերված կամ հնարավոր պայմանավորվածությունների առանցքը կազմվող հիմնարար դրույթների վերաբերյալ:

2. Սույն հոդվածի 1-ին մասին համապատասխան ներկայացված զեկույցը քննարկվում է արտաքին քաղաքականության, պաշտպանության եւ անվտանգության բնագավառներում իրավասու մշտական հանձնաժողովների համատեղ փակ նիստում՝ առանց որեւէ փաստաթղթի ընդունման:

3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված զեկույցում առկա տեղեկությունները պետական եւ ծառայողական գաղտնիքի շարքին դասելու եւ դրանց պաշտպանության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են համապատասխան օրենքով: Պատգամավորներն այդ տեղեկություններին կարող են ծանոթանալ օրենքով սահմանված կարգով:

4. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված զեկույցը Ազգային ժողովի պատգամավորների մեկ քառորդի պահանջով մեկամսյա ժամկետում՝ Խորհրդի սահմանած օրը, քննարկվում է Ազգային ժողովի հերթական նիստերում՝ Կանոնակարգի 126-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով:

5. Սույն հոդվածով նախատեսված խորհրդարանական վերահսկողության առարկային վերաբերող հարցերի պարզաբանման առնչությամբ իրավասու մշտական հանձնաժողովի կամ Ազգային ժողովի որոշմամբ կարող են հրավիրվել իրավասու պաշտոնատար անձինք, որոնք պարտավոր են ներկայանալ հանձնաժողովի կամ Ազգային ժողովի նիստին եւ պատասխանել հարցերին:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Առկա խնդիրները

2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին Արցախի Հանրապետության եւ Հայաստանի Հանրապետության դեմ սանձազերծված ագրեսիվ պատերազմի արդյունքում Հայաստանում ստեղծվել է բավականին բարդ եւ լարված իրավիճակ: Վերջինիս կայունացման նպատակով Հայաստանի Հանրապետության բարձրագույն ղեկավարությունը պարբերաբար բախվում է դժվարին որոշումներ կայացնելու խնդրին, ինչը կարող է լրջորեն ազդել ինչպես Հայաստանի Հանրապետության եւ իր քաղաքացիների կենսական շահերի, այնպես էլ երկրի հետագա անվտանգության ապահովման վրա: Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաեւ հիմք ընդունելով այն փաստը, որ 2015 թվականի Սահմանադրական փոփոխությունների արդյունքում Հայաստանի Հանրապետությունը անցում է կատարել խորհրդարանական կառավարման ձեւին, առավել քան երբեւէ կարեւորվում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի դերը՝ Հայաստանի Հանրապետության անվտանգության եւ ՀՀ քաղաքացիների իրավունքների պաշտպանության երաշխավորման մեխանիզմների ամրապնդման եւ վերջիններս ամբողջ ծավալով կիրառումը վերահսկելու հարցում:

Միեւնույն ժամանակ, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության շահերը՝ այլ երկրների, միջազգային կազմակերպությունների ու միջազգային իրավունքի այլ սուբյեկտների հետ հարաբերություններում հաճախ ի պաշտոնե ներկայացնում են Հայաստանի Հանրապետության վարչապետը եւ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարը, կարիք է առաջանում, որպեսզի Ազգային ժողովի պատգամավորները տեղեկացված լինեն վերոնշյալ պաշտոնյաների կողմից Հայաստանի Հանրապետության կենսական շահերին առնչվող բանակցություններից, արդեն իսկ ձեռք բերված կամ քննարկվող պայմանավորվածություններից եւ Հայաստանի Հանրապետության ու վերջինիս քաղաքացիների իրավունքներին ու շահերին վերաբերող կարեւորագույն այլ հարցերից:

Գործող իրավական նորմերի վերլուծությունը եւ իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Ժողովրդավարական հասարակությունում Կառավարության անդամների հաշվետվողականությունը խորհրդարանի առջեւ պառլամենտարիզմի կարեւոր հենասյուներից է: «Ազգային ժողովի Կանոնակարգ» սահմանադրական օրենքի 26-րդ գլուխն անդրադառնում է պետական մարմինների զեկույցներին, հաղորդումներին եւ հաշվետվություններին: Կառավարության ղեկավարի եւ կառավարության անդամների հաշվետվողականությանն անդրադարձ է կատարվում տվյալ գլխի 127-րդ հոդվածում, որը, սակայն, վերաբերում է բացառապես Կառավարության ծրագրի կատարման ընթացքի եւ արդյունքների մասին տարեկան զեկույցի ներկայացմանն ու քննարկմանը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայումս բանակցային գործընթացները կրում են շատ ինտենսիվ բնույթ, եւ պետության համար չափազանց զգայուն հարցերով տարաբնույթ միջազգային հարթակներում եւ ձեւաչափերով տարվա մեջ առնվազն մի քանի անգամ պայմանավորվածություններ են ձեռք բերվում, Կանոնակարգ օրենքի 127-րդ հոդվածը չի կարող բավարար չափով համապատասխանել առկա իրավիճակին: Այսպիսով՝ անհրաժեշտություն է առաջանում Կանոնակարգ օրենքում լրացումներ կատարելու, ինչը հնարավորություն կտա Ազգային ժողովի պատգամավորներին տեղեկացված լինել Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության, պաշտպանության եւ անվտանգության հարցերի վերաբերյալ ձեռք բերված պայմանավորվածությունների, ստորագրված կամ քննարկման փուլում գտնվող փաստաթղթերի եւ ոլորտային այլ կարեւորագույն հարցերի վերաբերյալ:

Որպես ժողովրդից առաջնային մանդատ ստացած եւ լեգիտիմացիոն շղթայում առաջնային տեղում գտնվող մարմին՝ Ազգային ժողովն իրավունք ունի տեղյակ լինելու եւ քննարկելու ցանկացած

սկզբունքային հարց, որը կարող է ազդեցություն ունենալ երկրի արտաքին եւ ներքին քաղաքականության առանցքային հարցերի վրա: Սահմանադրության 88-րդ հոդվածը վերապահում է գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու սահմանադրական կարեւորագույն գործառույթ, որի արդյունավետ իրականացումը ուղղակիորեն կախված է Ազգային ժողովի տեղեկացվածության աստիճանից: Ըստ այդմ, Նախագիծը ներդնում է այնպիսի կառուցակարգ, որը մի կողմից թույլ է տալիս Ազգային ժողովին լինել տեղեկացված, մյուս կողմից՝ չի միջամտում կառավարության ընթացիկ գործունեությանը եւ չի ծանրաբեռնում կառավարության անդամներին պատգամավորական հարցումների ինստիտուտի միջոցով:

Առաջարկվող կարգավորման նպատակը եւ բնույթը

Նախագծով նախատեսվում է, որ արտաքին գործերի նախարարը տարեկան չորս անգամ, իսկ հանրապետության վարչապետը՝ երկու անգամ Ազգային ժողով են ներկայացնում զեկույց՝ Հայաստանի Հանրապետության անվտանգության, պաշտպանության եւ արտաքին քաղաքականության համար ռազմավարական նշանակություն ունեցող հարցերում ընթացող գործընթացների, դրանց շրջանակներում վարվող բանակցությունների եւ ձեռք բերված կամ հնարավոր պայմանավորվածությունների առանցքը կազմող հիմնարար դրույթների վերաբերյալ: Ընդ որում, հաշվի առնելով ներկայումս ընթացող տարածաշրջանային գործընթացները, խնդիրը չի սահմանափակվում միայն Ադրբեջանի եւ Թուրքիայի գործոններով, այլ կարեւորվում են այլ երկրների եւ միջազգային կազմակերպությունների շրջանակներում Հայաստանի Հանրապետության հարաբերությունները, որոնք կարող են ունենալ տարածաշրջանային բնույթ կամ հանգեցնել գործընկերության նոր ձեւաչափերի ձեւավորմանը:

Նախատեսվող փոփոխությունները հնարավորություն կստեղծեն խորհրդարանական բոլոր ուժերին, այդ թվում՝ փոքրամասնություն կազմող խմբակցություններին հավասարապես իրացնել Սահմանադրությամբ եւ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով իրենց վերապահված լիազորությունները, մասնավորապես՝

- մշտական հանձնաժողովների աշխատանքների միջոցով իրականացնել խորհրդարանական վերահսկողությունն ավելի լայն ծավալով.

- հընթացս տեղեկացված լինել երկրի համար կարեւորագույն հարցերի շուրջ ձեւավորված օրակարգի մասին, առաջին հերթին՝ ՀՀ վարչապետի եւ ՀՀ արտաքին գործերի նախարարի կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա:

Միաժամանակ, հաշվի առնելով փոխանցվող տեղեկատվության բնույթը (տեղեկատվությունը կարող է ներառել պետական կամ ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկություններ) նախագծով առաջարկվող կարգավորումները նախատեսում են նման տեղեկատվության փոխանցում միայն պետական եւ ծառայողական գաղտնիքի պահպանությունն երաշխավորող օրենսդրությամբ սահմանված կառուցակարգերով, իսկ նշված հարցերի քննարկումը Ազգային ժողովի համապատասխան մշտական հանձնաժողովի փակ նիստի շրջանակներում:

Ավելին, նախագծով սահմանված կարգավորումները հնարավորություն կընձեռեն պատգամավորների առնվազն մեկ քառորդի պահանջով ներկայացված զեկույցի վերաբերյալ քննարկում կազմակերպել Ազգային ժողովի հերթական նիստում՝ դրանով իսկ երաշխավորելով, որ երկրի համար կարեւորագույն արտաքին քաղաքական մարտահրավերները դառնան պառլամենտական քննարկումների առարկա եւ չսահմանափակվեն միայն քաղաքական մեծամասնության ձեւավորած կառավարության հայեցողությամբ:

Ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունումը դրական ազդեցություն կունենա Ազգային ժողովի պատգամավորների եւ, մասնավորապես, ընդդիմության կողմից խորհրդարանական վերահսկողության գործիքակազմերի

ամբողջական իրացման տեսանկյունից: Վերոնշյալ նախագծի ընդունման պարագայում Ազգային ժողովի պատգամավորներն առաջին ձեռքից եւ արդյունավետ պարբերականությամբ տեղեկացված կլինեն Հայաստանի Հանրապետության շուրջ ստեղծված աշխարհաքաղաքական իրավիճակի ու դրանից բխող խնդիրների հայամետ հանգուցալուծմանն ուղղված քայլերի վերաբերյալ: